

հիւրերը ներս կը հրաւիրէր անձամբ, եւ անոնք կ'ընդդիմանային, թերեւս պատճառելով՝ թէ անօթի չեն, ճաշելու չեն եկած, այլ տանուտէրը տեսնելու. կամ թէ ներս մտնելու կարգը վերջնոյս կամ այլոց թողլով: Իսկ ընթրատուն թախանձանօք կը ստիպէր ու ներս կը տանէր: Այս պարագայն կ'աւանդէ մեզ Մանդակունին, երբ կը պահանջէ՝ որ ազապի կոչուին լոկ աղքատները՝ փոխանակ մեծատանց. եւ կը յարէ՝ թէ «գնոսա միայն մոյծ աղաչանօք» (59, 60):

13. — Թերեւս ցումն հանդերձից: — Մեր ազնուականը զգեստուց այն ծանրաբեռնութեամբ որով եկան՝ սեղան չեն նըստիր, այլ անոցմէ աւելորդը կամ նեղիչը կը հանեն՝ որպէս զի կարենան հանգիստ ճաշել, ինչպէս կ'ընէին Հոովմայեցիք ալ (Գար. Ա, 1281):

Նախ՝ ամենուն գլուխը բաց պիտի լինէր. անոր համար արքունի կամ ազնուական կոչնոց մէջ կը հանուին թագ եւ որ եւ է գլխանոց, մնալով միայն «պատիւ վարսին» կամ վարսակալը՝ զոր տեսանք այլուր (աստ, 150): Պապայ մէկ ընթրեաց պահուն անոր թագը կը հանգչի յատուկ սենեկի մը մէջ, որ կը կոչուէր «տուն»